

ՄԵԼԻՔԳՅՈՒՂԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

1995 թվականի հունիսի 25-ը պատմական օր եղավ Արագածի շրջանի բարձրաբերձ լեռներում ծվարած Մելիքգյուղի և շրջակա՝քի հազարավոր բնակիչների համար: Այդ օրը տեղի ունեցավ ուղիղ վաթսուն տարիներ առաջ, 1935 թվականին, փակված Ս. Հովհաննես եկեղեցու վերաբացումը: Օրը կրկնակի անգամ արժևորվեց, քանզի, սիրով ընդառաջելով Շիրակի թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանի հրավերին, եկեղեցու օծման ու վերաբացման զմայլելի արարողությանը նախագահեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Հայրապետը:

Այս ուրախալի առիթով Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին գավազանակիր Տ. Միքա՝ել ծ. վրդ. Աջապահյանը և ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Նաթան ծ. վրդ. Հովհաննիսյանը:

Ավանդական աղուհացով Արագածի շրջանի սահմանին թեմի առաջնորդի և առաջնորդական փոխանորդ Տ. Սեպուհ վրդ. Զուլջյանի հետ Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել նաև Շիրակի տարածաշրջանում ՀՀ Կառավարության լիազոր ներկայացուցիչ Ա. Քոչարյանը, Արագածի շրջխորհրդի նախագահ Ա. Կարապետյանը, Գյումրիի քաղաքապետ Մ. Վարդանյանը, մոտակա այլ շրջանների ղեկավարներ, Մելիքգյուղի գյուղական խորհրդի նախագահ Ա. Կարապետյանը և բազմահարյուր բնակիչներ:

Այստեղից ավտոմեքենաների շարասյունն ուղևորվեց Մելիքգյուղ, որտեղ գտնվում է ԺԹ դարի վերջին կառուցված Ս. Հովհաննես եկեղեցին, որն ոչ մեծ չափերի մի աղոթատեղի է, որի փայտյա տանիքը հենվում է Սարիղամիշից բերված վեց ընտիր գերանների վրա, որոնք պահպանվել են մինչև այսօր:

Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք գործեց եկեղեցի, որից հետո տեղի ունեցավ եկեղեցու պղծված և ապա վերանորոգված ու բարեզարդված բեմի ու խորանի օծման արքազան արարողությունը: Օծման արարողությունից հետո մատուցվեց ս. պատարագ: Պատարագիչն էր Շիրակի թեմի առաջնորդ Գրիգորիս արքազանը: Օծման արարողությանն ու ս. պատարագին ներկա էին ինչպես ղեկավար անձինք, այնպես էլ բազմահարյուր բնակիչներ և՛ Մելիքգյուղից, և՛ մերձակա գյուղերից:

Պատարագի ավարտին, եկեղեցուց դուրս հավաքված հոծ բազմության առջև, առաջնորդ արքազանի և շրջանի ու գյուղի ղեկավարության խոսքերից հետո, ոգեշունչ քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը՝ ներկաներից յուրաքանչյուրի սրտում ու հոգում դրոշմելով օրվա իմաստն ու խորհուրդը:

Վեհափառ Հայրապետը ի մասնավորի նշեց, որ այս դեպքը անկյունադարձային է իր կյանքում այն իմաստով, որ թեև ինքը բազմաթիվ եկեղեցիներ է օծել Լիբանանում, Սիրիայում, Պարսկաստանում, ԱՄՆ-ում, Բելգիայում և այլուր, սակայն առաջին անգամն է, որ իր բուռ մատը թաթախում է Սրբալույս Մյուռոնի մեջ՝ նրանով դրոշմելու համար հայրենիքի տուֆ քարերը...:

Հատկանշական է նաև այն, նշեց Վեհափառը, որ իր այս անդրանիկ օծման արարողությունը տեղի է ունենում մի փոքրիկ գյուղում, ուր տեղի բնակչությունը իր սեփական ուժերով ու հնարավորություններով կարողացել է վերականգնել ավերված մատուռը և հույսը չի դրել դրսից եկող օգնության ու օժանդակության վրա: Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ սա է ճշմարիտ եկեղեցակերտումի ճանապարհը, քանզի ժողովուրդն է, որ կառուցելու է իր եկեղեցին՝ իր ճակատի քրտինքով ու արդար վաստակով: «Երբ դուք կատարեք ձեր պարտքը, վստահ եղեք, որ արտասահմանի ձեր եղբայրներն ու քույրերը իրենց ձեռքերը կմիացնեն ձեր ձեռքերին», ասաց Վեհափառը:

Խոսքի ավարտին Վեհափառը կոչ ուղղեց ժողովրդին, որ չսահմանափակվեն եղածով, այլ մշտապես լցնեն եկեղեցին աղոթքով ու խնկով, որպեսզի տաճարը չմնա սոսկ քարեղեն շինություն, այլ խոսի Աստծուց, Այնտարանից, մեր հայրերից և խոսեցնի հայորդիներին:

Ապա Վեհափառը իր գոհունակությունն արտահայտեց ու շնորհակալություն հայտնեց բոլոր այն անձնավորություններին և ղեկավար անձանց, ովքեր սատար են կանգնել եկեղեցու վերանորոգման աշխատանքներին և իրենց լուման են ներդրել այս գեղեցիկ ձեռնարկի մեջ, և իր օրհնությունը բաշխեց հավաքված ժողովրդին:

Անմոռանալի օր եղավ հունիսի 25-ը, որը վստահաբար խմորելու է շրջանի հայության կյանքն ապագայում: Կրոնական վերազարթոնքի շունչը է, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միջից տարածվում է ողջ Հայաստանում և Արցախում:

ՄԻՔԱՅԵԼ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԱԶԱՊԱՀՅԱՆ